

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/7

քսանը ապրիլի 2012 թվականի

<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի միջազգային կրթական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2012 թ. ապրիլի 20-ի նիստում
ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Հ. Միմնյան
«20» ապրիլի 2012թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) միջազգային կրթական կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է օտարերկրյա քաղաքացիների մինչբուհական և հետբուհական լրացուցիչ կրթական ծրագրեր, իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

2. Կենտրոնը ստեղծվում, վերակազմակերպվում, կամ լուծարվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

3. Կենտրոնի կանոնադրությունն ընդունվում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարվում են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

4. Կենտրոնի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ Երևանի պետական համալսարանի միջազգային կրթական կենտրոն,
ռուսերեն՝ Международный образовательный центр Ереванского Государственного Университета,

անգլերեն՝ International education centre of the Yerevan State University:

5. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ծարավ Աղբյուրի 55Ա:

6. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ԵՊՀ կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

7. Կենտրոնն ունի կնիք, իր անվանմամբ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Կենտրոնի խնդիրներն են.

1) ԵՊՀ-ում կամ Հայաստանի Հանրապետության այլ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ուսումնառությունը շարունակելու համար նախապատրաստական դասընթացների կազմակերպումը,

2) օտարերկրյա քաղաքացիների հետբուհական լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումը,

3) Սփյուռքի համար վերապատրաստման և կրթական հատուկ ծրագրերի իրականացումը, ամառային դպրոցի կազմակերպումը,

4) օտարալեզու ունկնդիրների համար հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսուցումը:

9. Կենտրոնի գործառնություններն են՝

1) նախապատրաստական դասընթացների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմումը,

2) նախապատրաստական դասընթացների ուսումնական գործընթացի կազմակերպումը,

3) նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների կազմակերպումը,

4) օտարերկրյա քաղաքացիների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման կազմակերպումը,

5) «Սփյուռք» ամառային դպրոցի նախապատրաստումը և անցկացումը,

6) օտարալեզու ունկնդիրների համար հայոց լեզուն որպես օտար լեզու ուսուցանելու բազմամակարդակ դասընթացների մշակումը և իրականացումը, օտար լեզուների ուսուցման կազմակերպումը,

7) կենտրոնի ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը:

10. Կենտրոնն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և կենտրոնի կանոնադրությանը:

11. ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով ԵՊՀ խորհրդի որոշմամբ կենտրոնին կարող են հատկացվել ֆինանսական միջոցներ, որոնք կենտրոնը տնօրինում է սահմանված կարգով:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Կենտրոնի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը և կենտրոնի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

13. Կենտրոնի կառավարման մարմիններն են՝ գիտական խորհուրդն ու տնօրենը:

14. Կենտրոնի գիտական խորհուրդն իր իրավասության սահմաններում քննարկում և լուծում է կենտրոնի ուսումնամեթոդական գործունեության հիմնական հարցերը:

15. Կենտրոնի գիտական խորհրդի կազմում ընդգրկված են կենտրոնի տնօրենը, որպես գիտական խորհրդի նախագահ, նրա տեղակալները, ամբիոնի վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը, արհբյուրոյի նախագահը, ինչպես նաև կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները: Գիտական խորհրդի

կազմում կարող են ընգրկվել նաև արտահամալսարանական և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները:

Կենտրոնի գիտական խորհրդի կազմը կենտրոնի տնօրենի ներկայացմամբ հաստատում է ԵՊՀ ռեկտորը:

16. Կենտրոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է տնօրենը՝ իր իրավասության սահմաններում և կենտրոնի կանոնադրությանը համապատասխան: Կենտրոնի տնօրենը նշանակվում է ռեկտորի հրամանով:

17. Կենտրոնի տնօրենը.

1) ղեկավարում է կենտրոնի գործունեությունը կրթական, մեթոդական, միջազգային և այլ ոլորտներում,

2) ապահովում է գիտական խորհրդի ընդունած որոշումների կատարումը, վերահսկում է ուսումնական գործընթացը,

3) արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են կենտրոնի աշխատողների ու ունկնդիրների համար:

Կենտրոնի տնօրենը կարող է ունենալ տեղակալներ, որոնց իր ներկայացմամբ նշանակում է ԵՊՀ ռեկտորը:

18. Կենտրոնը սահմանված չափանիշներին համապատասխան մշակում է իր հաստիքացուցակը, որը հաստատվում է ռեկտորի կողմից:

19. Կենտրոնի կազմում կարող են գործել ամբիոններ, բաժիններ և այլ ստորաբաժանումներ:

20. Սույն կանոնադրության հավելվածում ներկայացվում են կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումները:

Հավելված

ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնի կանոնադրության

1. Հանրակրթական առարկաների ամբիոն,
2. Սփյուռքի հետ տարվող աշխատանքների բաժին: